

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ժր.

Վեցամսեայ 6 Ժր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւրակի ծրարով

Տարեկան . . . 12 Ժր.

Վեցամսեայ . . . 7 Ժր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօյառ

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Ծանոցման սողը
20 սանթիմ



ՀԱՅԿ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՒԻՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՅԿ

Rédaction du journal

„Iraounk“

VARNA (Bulgare)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Iraounk“

ВАРНА

Գրութիւնք եւ լին
տրութիւնք

ՊԻԵԼՈՍԹՈՐԻ ԴԵՊԵՐ

—*—

Մեր չորեքշաբթի օրուան թերթով Պիելսոսթօրի մէջ տեղի ունեցած արեւնահեղ դէպքի մը վրայ Վիլնայէ քաջուած հեռագիր մը հրատարակեցինք :

Կերէի որ Պիելսոսթօրի մէջ պատահածը ո՛չ թէ թեթեւ դէպք մը էր, ինչպէս որ յիշեալ պաշտօնական աղբիւրէ հաղորդուած հեռագիրը ցոյց տուած էր, այլ խիստ ծանրակշիւ եղելութիւն մը, որոյ մասին հասած նորագոյն տեղեկութիւնները հարկ կը տեսնենք քաջուածաբար հաղորդել մեր ընթերցողաց :

Յունիս 14 ին կէս օրէ յետոյ Պիելսոսթօրի մէջ տեղի ունեցած Պէնտէկոստէի թափօրը վրդովեցաւ Հրէի մը տունէ արձակուած ռումբի մը պայթումէն :

Պիելսոսթօր քաղաքը ունի 65 հազար բնակիչ որոնց երեք չորրորդ մասը հրեայ են, և քաղաքը զինուորական մեծ ուժով պահպանուած է :

Ռումբը՝ Ալեքսանտրովսքայ փողոցին մէկ տունէն նետուեցաւ : Ինչպէս որ կը պատահի ընդհանրապէս Ռուսիոյ մէջ, ռումբին պայթումէն անմիջապէս առաջ եկաւ ճշմարիտ պատերազմ մը հրէից և քրիստոնէից մէջ, և ի հարկէ ըստ սովորութեան զօրքը քրիստոնէից կողմը բռնեց :

Ալեքսանտրովսքայ և Ալեքսանտրովսքայ փողոցներուն մէջ քրիստոնեաները հրէից բոլոր խանութները կոխելով մէջի եղածները կողոպտեցին, շէնքերը քանդեցին, շատ մը ապրանքներ ալ գետը նետեցին, ծեծեցին և ջարդեցին դէպի երկաթուղայ կայարանը փախչող հրեայները : Ամբոխը ասոնց ետեւէն վազելով սպաննեց շատերը, և երեք հրեայ վար նետեց կայարանի երկրորդ յարկի պատուհաններէն սալալատակի վրայ :

Հրեայները անհաշիւ մեծաւայ անտառներուն մէջ փախան :

Հոն ևս քրիստոնէից ամբոխը ետեւնուէն հասաւ, ինչպէս նաեւ խումբ մը վիշապազօրք :

Քանի որ կառավարութեան կը հասնէին և հրեայները կաշխատէին մէջը մտնել քաղաքէն փախչելու համար, կատաղի ամբոխը վակոններէն դուրս կը քաշէր զանոնք ու կը չարչարէր :

Կէս օրէ յետոյ ժամը 4 ին զօրքը յաջողեցաւ երկաթուղայ կայարանը պարպել, սակայն անկարգութիւնները շարունակեցին կատարուիլ քաղաքին մէջ :

Երեսուն հրեայ մեռան և հարիւրէ աւելի վիրաւորուեցան, հիւանդանոցները լեցուեցան : Վնասելոց ճիշդ թիւը դեռ յայտնի չէ :

Զորս գլխաւոր փողոցներու մէջ գտնուող ամբողջ հրէից խանութները կողոպտուած են :

Պահապան զօրքեր կը պոտին փողոցներուն մէջ : արգիլեալ է ո՛ր և է քաղաքացիներու մտնել քաղաք :

Ուրիշ աղբիւրէ մ'ալ առնուած տեղեկութեանց համաձայն, Պիելսոսթօրի անկարգութեանց առեւն մեռնողներու թիւը եղած է 20 իսկ վիրաւորելոցը 150 :

Պիելսոսթօրի երկաթուղայ կայարանապետը հեռագրեր է թերթերու լրագրողներէն՝ Վարչապետի գծին վերատեսչին, որ անկարգութիւնները կը շարունակուին, և խռովարարները կարգի են որ կառավարութեան կայարան մտնեն և ապրանք բերեն :

Յունիս 16 ին տակաւին զինաձգութիւնը կը շարունակէ եղեր, և ամբողջ գիշեր Ռէվօլվէրի և հրացանի ձայներ լսուեցին : Մինչև այն օրը մեռնողներու թիւը հասեր է 53ի : Բոլոր գործարանները փակուած են, չեն թողուր որ մարդ քաղաք մտնէ, ուր ուտելիք չէ մնացած :

Վերջին գիշերուայ մէջ զօրաց և խռովարարաց միջեւ ուժգին բաղաձայններ տեղի ունեցեր են, և խռովարարները չրջակայ տուններէն վարչութեան և ոստիկանութեան վրայ կրակել են, սա

կայն յետոյ զօրաց խմբովի զինաձգութեամբ թէեւ անոնք արտաքուեցան տուներէն, բայց չը մեկնեցան մինչև որ այրեցին այն տուները : Զրհանակիրները չկրցին հրդեհը մարել, որով տուներուն մէջ գտնուած մեծաքանակ հրանիւթերն կրակ առնելով պայթեցաւ :

Վարչապետին 18 Յունիսի քաջուած հեռագիր մ'ալ կը յայտնէ որ հրէից դէմ հալածանք ծագած է նաեւ Կրօտնո նահանգի Զապլոնոսով, Օսովիէք, և Կոնիօն գիւղերը :

Ապառաւան լրագրիւրները բոլոր այս սփռագործութիւնները կատարուած են կրօնի իշխանութեանց թերթերով թեմաբար : Կրօնի նաեւ թէ այս հակահրէական խռովութիւնները կառավարութիւնը կամ զէթ անհոգ թեմաբար : Կրօնի նաեւ թէ այս հակահրէական խռովութիւնները կառավարութիւնը կամ զէթ անհոգ թեմաբար : Կրօնի նաեւ թէ այս հակահրէական խռովութիւնները կառավարութիւնը կամ զէթ անհոգ թեմաբար :

Տուժան իր անդամներէն երեք հոգի խրկել է որ Պիելսոսթօրի մէջ անձամբ մանրամասն քննութիւն կատարեն եղածներուն վրայ, իսկ կառավարութիւնը պաշարման վիճակի մէջ գտնուած է քաղաքը և շրջակայքը :

ԽՈՒՎՈՒԹԻՒՆՔ Ի ՌՈՒՍԻԱ

—*—

Քրօնչդատէն արժանահաւատ աղբիւրէ ստացուած վերջին լուրերը կը ծանուցանեն թէ տեղւոյն քաղաքական գրութիւնը շատ սպառնալից է : Ասի տեղական մի լրագիր ևս հաստատելով կրէ թէ՛ նաւազներուն, գործաւորներուն և բերդին զօրքերուն մէջ բորբոքումը աւելնալու վրայ է, և կը վախճուի որ անցեալ տարուան խռովութիւնները պիտի կրկնուին նորէն : Քրօնչդատի հարուստ քաղաքացիք տուներն ին կը ձգեն կը մեկնին : Երկու նոր զօրագնդեր թնդանութիւնով

խրկուեցան հոս հարկ եղած տներն խռովութեանց առաջնաւանդու համար :

Հողային խռովութիւնները սկսած են Թվերի, Ռիազաք, Հովկորոտի և Բոտոլիայի նահանգաց մէջ : Հողատէրերը քաղաքները կը փախչին իրենց վախէն :

Վոլհինի մէջ եանօֆ ըստած տեղը հինգ մարդ գիշերը Պէլթ-ժինկի ամբողջ ընտանիքը սպաննեցին և ստիպեցին 13 տարու տղան որ ճրագը բռնած կանգնի մինչև որ իրենք սպաննեն իր հայրը, մայրը եղբայրներն ու քոյրերը :

Զօրաց մէջ ապստամբական խլրտուածներ միշտ անպակաս կերակին : Կայսեր պահապան զօրքերն իսկ ամէն օր իրենց երկրէն և ծնողներէն խիստ հրամաններ կստանան Տուժային չգալչելու համար : Իսկ Տոնի կողակները մեծ դժգոհութիւն կը յայտնեն որ կառավարութիւնը գիշերը կը գործածէ ստիպական գործերով և յիշուր որ իրենց տունները դառնան :

Բոլթովայի կառավարիչը ներքին գործոց նախարարութեան իմացուցած է որ հողային խռովութիւնները կսպառնան կարեւոր համեմատութիւններ ստանալ : Կառավարիչը յայտնուած է նաեւ որ կը վախճուի թէ նահանգային պահապան զօրքերը չըլլալ միանան գիւղացւոց և անոնց հետ գործակցին :

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՆԵՐ

Երեւան 27 մայիս. — Այսօր քաղաքային կշռի մօտ առաւօտեան ժամը 9 ին տեղի ունեցաւ թուրքերի կողմից յանկարծակի յարձակում հայերի վրա, որը արձագանք տուեց Ղասաբխանի, Յախի մէյդանի թուրքերի մէջ, որոնք նոյնպէս սկսեցին կրակել : Այդտեղ գտնուող հայերի վրա : Առ այժմ սպանվածներից յայտնի են 4 հոգի հայեր, որոնցից մէկը էջմիածնի թանգարանի վերակացու Հաջին է. սպանվել է մէկ թուրք եւ վիրաւորուած կան 10 հոգի, որոնցից մէկը վրացի, մէկը հրեայ, մէկը

մօլական եւ միւսները հայեր : Բոլոր խանութները փակ են : Թուրքերը ընդհանրապէս փախան . անյայտացան , իսկ հայերը զեռ շրջում են բուլվարում , խանութները մօտ , դրուծիւնը կրտսերական է :

Երեւան, 27 մայիս. — Այսօր, առաւօտեան մօտ ժամը ճիշդ ինն ու կէսին, երեւանում տեղի ունեցաւ հետեւեալ զէպը : Մէյդան կոչված տեղում երկու թուրք սկսում են կրուել իրար հետ : Երբ միջամտում են, թուրքերից մէկը յետ է դառնում եւ խփում մի հայի : Գործողայնները աշխատում են թուրքին հեռացնել, բայց թուրքը յամառ կերպով սկսում է լետ դառնալ եւ կուել, որին միանում են եւ մի խումբ ուրիշ թուրքեր : Հայերը տեսնելով, որ սա նախապատրաստում էր բան է, սկսում են յետ քաշվել, իսկ հետո գտնվածները փախչել : Թուրքերը նկատելով հայերի ա՛ղէն լինելը, սկսում են շարտանքից կրակել հայերի վրայ : Վերաւորում են մօտ 10—15 հայ, մի մօլական եւ մի վրացի : Զինուորները բռնել են 4—6 խփող թուրքի, որոնցից առել են ատրճառակներ եւ խնչարներ : Վերաւորումների մէջ է եւ իշխանների գրադարանագետը (տաճակասանցի) : Երկին վերաւորվածներ են բերում քաղաքի զանազան մասերից : Ինչպէս ասում են, ոչ մի թուրք չէ վերաւորված :

Երեւան 29 մայիս. — Նոր ընդհանրումներ տեղի չեն ունեցել : Այսօր հանգիստ է :

Հայերից վերաւորված են 9 եւ ըսպանված 16 : Թուրքերից վերաւորված 6, սպանված 4 : Բացի այդ ըսպանված է 1 մօլական, վերաւորված են 1 վրացի, 1 հրէայ եւ մէկ ասորի : Բանտարկված են երեք թուրք, որոնք ներգործական դեր էին կատարում :

Երեւանում լուրեր են տարածվել, որ իբր թէ յունիսի 12 ին պէտք է տեղի ունենան ընդհանրումներ :

Շուշի 28 մայիս. — Քաղաքի մօտիկ Ղաթալի գիւղից 5 հայ ուսուցիչ պաշարեղէն են բերել ինում քաղաք : Շուշու թուրքերից մի խումբ, քաղաքից դուրս, յարձակվում

այդ հայերի վրա, 4 հոգուն սպանում են, իսկ մէկը փախուստ տալով կարողանում է ազատվել :

Երեւան մայիս 28. — Հէնց նոր պաշտօնական տեղից իմացանք, որ մայիսի 27 ին հայերի վրայ թուրքերի յարձակման ժամանակ սպանվել են 13 հայ, 7 թուրք, մի մօլական եւ մի հրէայ, մի վրացի եւ մի ասորի : Իշխանների խանութարանի կառավարիչ տաճկաստանցին մի քանի ժամուկ յետոյ մեռնում է :

(ՄՇԱԿ)

ՏՈՒՄԱՅԻՆ ՁՈՒՐՁԸ

Տուժայի 15 յունիսի նիստը խորվայից եղաւ :

Ժողովը նախ մերժեց կատարել Բեթերսպուրկի դատարանի հրամանները՝ որով պահանջուած էր երեսփոխան Ուլիսիոֆի Տուժայէն հեռացումը, իր հրատարակութեան տուած ինչ ինչ յեղափոխական յօդուածոց համար :

Յետոյ պատերազմական նախարարի կողմանէ խրկուած զօրապետ Բալուվ Ժողովոյ ներկայանալով յայտնեց թէ՛ պատերազմական նախարարը իրաւասութիւն չունի մահուան պատիժը ջնջելու եւ միջամտելու դատարանական գործողութեանց : Զօրապետ Բալուվի այս յայտարարութիւնը այն աստիճանի բարկացուց ժողովականները որ ամենը միաձայն սկսան «մարդասպան», «դահիճ» պոռալով նախագահը սպառնացաւ փակել նիստը, եւ յետոյ խօսքը տուաւ զօրապետ Բուսովին երեսփոխանին, որն որ երեսփոխան Լատիսիցիի հետ այնչափ կրակ ու բոց ատենախօսութիւնները ին, որ սրանք չդադրեցաւ աղմկալից ծափահարութիւններով իր համատեղութիւնը յայտնել : Ատենախօսք կառավարութեան դէմ յարձակելով ըսին թէ ամբողջ երկիրը յուսահատած է, եւ ասորի համար սոսկալի եղելութիւններ պիտի տեսնուին քիչ ատենէն :

Երեսփոխան Ալֆանսիէֆ քահանայն խօսք առնելով յիշեց «ազատութեան համար կռուող» Սէֆաստարօյցի տե-

ղակալ Շմիտի անունը : Բազմաթիւ երեսփոխաններ այս անունը լսելով ոտքի ելան եւ մեծ շողովմամբ ծափահարեցին : Ատենախօսք վերջացուց ըսելով թէ աստուածային բարկութիւնը պիտի գետնահարէ այն չարագործները, որոնք օրէնքի պատրուակաւ չպիտի կարողանան ազատիլ, երբ ժողովուրդը յուսարէկ եւ զայրացած ոտքի ելնէ :

Պիէլօսթօքի խորվովիները հետարձգանք գտաւ Տուժայի մէջ : Երբ անոնց լուրն հասաւ, Տուժան սկսաւ մեծ յուզմանց մէջ ծիպալ :

Բազմաթիւ երեսփոխաններ յաջորդաբար բուռն ատենախօսութիւններ ըրին Պ. Նապօքօֆ ըսաւ թէ՛ անուրանալի է այժմ որ անկարգութիւնները սկսած են կառավարութեան կողմէ տրուած նշանի մը վրայ, ինչպէս անցեալ տարի ալ եղած էր ի Բիշնէվ եւ ի Զօմէլ : Ատենախօս անդից որ Տուժան պարտաւոր է անմիջապէս գործել այս գաղանային ոճրագործութեան դէմ :

Հրեայ երեսփոխան Լէվինը ըսաւ. Պիէլօսթօքի արարմանց նախապատրաստութիւնն ու անոնց հեղինակները՝ ոստիկանութեան վերապետին խիստ ծանօթ են, եւ Պիէլօսթօքի գէպը՝ նախարարաց կողմէ Տուժային տրուած վերջնական պատասխանն է : Երեսփոխան Ռօտիէֆ կըսէ, «Հայրենեքը վտանգի մէջ է ինչու որ կառավարութիւնը ինք կը պարտաստէ հակահրէական անկարգութիւնները : Հայրենեքը պիտի մնայ վտանգի մէջ, քանի որ նախարարութիւնը իշխանութեան գլուխը կը մնայ եւ չը հեռանար » :

ՆԱՄԱԿ ՖԻՆԼԱՆԴԻԱԿԻՅ

Հէյսինգֆօրս. Մայիսի 20-ին Ստորագրեալ ի ծննդնէ չուչիցի իններով, այլ եւ այլ գծաւորութիւններ պատճառով ֆինլանդացիք հմ դառնել տառնեկու տարի սրանից առաջ, եւ պէտք է տեսն. որ այս երկրում բաւական պատիւ ունենալու շատ հանգստութիւն եմ վայելում գրեթէ ամեն կողմից : Թողէք շատ օգուանիք մի-

սիրտը կրնային վերաւորել. —այդ պահուն յարմար առիթ սկսեցին քանի մը անգեկութիւններ ստանալ ու անոր ներքեւ կեանքը պարզել տալ : Ուստի վանահայրը հարցուց .

—Բանի՞ տարի մնացիր Զէքի պէյին ապարանքը :

—Այո, ճիշդ մէկ ու կէս տարի չափ, հառաչեց վարսնիկ քիչ մը ալալելով ու աչքերը կուրծքին վրայ յառելով :

—Հոն ի՞նչ անուն կուտային քեզի :

—Շէվքիէ հանըմ կը կանչէին :

—Զը պիտեցին որ հաւատաք ուրանաս :

—Այո, ստիպեցին . մինչեւ իսկ անարգ Մօլլան քովս եկաւ ու պիղծ բերնով սկսաւ ըսել ինծի. « Զեր կրօնքը սուտ է ... դուն անհաւատ մի՛ մնար : Կը նայի՞ս, ինչպէ՞ս Աստուած կուզէ որ սպաննուին ամեն անո՞նք որ ճշմարիտ կրօնքէն չեղելով կորստեան ճամբու մէջ ինկած են : Պէ՛տք է ուրախութեամբ մը գլուխդ ծռես իսլամութեան հանդէպ ու այսուհետեւ ճանչնաս իսլամն ու շարը » : Բայց ես չը պատասխանեցի : Միայն թէ՛ մտքեւ ըսի ինքնիշխանս. « Ես Բիթատտի անու-

այն մէկ հատը յիշեմ, Հէնց որ զիտաւորութիւն եմ ունենում ես ինքս կամ իմ զաւակներէր մէկը այս երկրից արտասահման գնալու, միեւնոյն օրը, որ յայտնում ենք կառավարութեան մեր ուղածը, ստանում ենք եւ անցագիրը, որի վրայ ընդհանրապէս գրած է ինում հինգ տարւայ ժամանակով, եւ այդ հինգ տարւայ արտասահմանեան անցագրի վճարն է ընդամենը եօթը ֆլորանք 24 սանտիմ, ալսինքն հազիւ եցեք ռուբլի :

Իբաւ է, որ ես իմ ընտանիքովս Բուլղարիայի Վառնա քաղաքումս եմ բնակվում եւ այնտեղ կարողութեանս չափ խօսքով գրչով եւ մի իրիւն հայկական դպրոցով գործում եմ երկու վարժի հի դուստրների հետ միասին զխաւորապէս մեր հայերի մէջ, սակայն այժմ մի երկու ամիս է, որ Ռուսաստանի ճանապարհորդելով՝ Ֆինլանդիա եմ եկել եւ այստեղ երթնմ գերմաներէն, երբեմն ռուսերէն եւ երբեմն էլ ֆին թարգմանիչով քարոզներ եւ արեւելեան վիճակի վրայ ատենախօսում եմ :

Այս երկրի Հէյսինգֆօրս մայրաքաղաքը շատ կողմից կարող է իր խաղաղութեամբ, իր օրինապահութեամբ, իր կուլտուրական առաջնորդ արշաւանքով եւ ընդհանրապէս իր բարեկեցիկ վիճակով լաւ օրինակ լինել Ռուսաստանում գտնված շատ աղքատի եւ մանաւանդ մեր կովկասցի հայերիս համար : Արդէն այստեղի ամառվան եղանակը քաղցր ու զուարճալի է, ամեն տեղ մաքուր լճեր, ծովի եզերքը անթիւ կղզիներ, հանգիստ ճանապարհներ, ապահով, օդաւէտ բնակարաններ եւ ամեն տեսակ կարգին ու օգտակար հանգամանքներ կան : Ի՛նչ հաճելի կը լինի մանաւանդ կարողութիւն ունեցող ընտանիքների համար այստեղ գալ եւ ամառը մինչեւ աշունը այստեղ անցնել : Աւելի շահաւէտ կը լինի գիտնական եղբայրասէր հայերի համար այս ֆինլանդացիների ինքնավարութեան առաջնորդ գործերը տեսնել, քննել ու մանրամասն հասկնալ ու յետոյ նոյնանման սկզբունքներ տարածել մեր ցեղակիցների մէջ :

Այս երկրից Շուէդիայի մի մասը եղած ժամանակը, որ զեռ անցեալ դուրի սկզբիցն առաջ Ռուս պետութեան հետ չէր միացած, ունէր մի մշտատեւ

նով ու իմ եկեղեցիիս աւագանին մէջ միջոտուած եմ . պիտի չուրանամ ... թո՛ղ սպաննեն, թո՛ղ կտոր կտոր ընեն զիս ու յոյժտեն մարմինս » :

—Այդչա՞ք. — ուրիշ բան մը չըրա՞ւ Մօլլան :

—Ոտքի կեցուց զիս, ինքնիշխան մը ըլլտաց ու չուրի պէս կղկզաց : Զը հասկայ ըսածները : Զեռքերը գլխուս տարաւ, ականջներուս փակցուց, մօրուքին քսեց ու յետոյ ուսեցուց վրայ դրաւ : Ո եւ է շարժում մը չըլլի : Այսպէս, քառորդէ մաւելի տեւեց արարողութիւնը :

—Մինակ է՞ք :

—Այո, ես ու ան էինք սենեկին մէջ :

—Յետոյ :

—Յետոյ ներս եկան Զէքի պէյ, կիներ՝ Յաթմայ-հանըմ, սպասուհիները ու Շիւքրի պէյ որ Զէքի պէյին որդին էր : Ասոնք ամենքն ալ յարգանքով մօտեցան Մօլլային ու տնոր ձեռքը համբուրեցին : Ուրախ էին ու իմ երեսն կը նայէին հետաքրքիր նայումքով մը : —Գլուխդ քա՞ց էր :

Ա. ՇԻՏԱՆՆԱՆ

ՍԱՐԻՊ ԱՆՊԵՐ...

(Շար. նախորդ թիւէն)

ՃԱ.

—Սրբազան հայր, հօրաքոյրը գտայ անիկա խոստացաւ ընկունիլ ... բայց իրեն առ այժմ չը յայտնենք :

—Ինչպէս որ կուզես, ե՛րբ պիտի տանիս :

—Այս գիշերը :

—Ըսելէ թէ այսօր հո՞ս ես :

—Այո՛ :

—Ա. ելի աղէ՛կ : Ժամանակ կուենանք խօսելու, անանկ չէ՞ :

—Այո՛, սրբազան հայր :

Ու երկուքն ալ խուցին ներքնամասը յառաջացան որ վարսենիկ նստած կակուղ միտաբար մը վրայ կը կարդար : —Ինչ է՛ կը կարդաս, վարսենի՛կս, հարցուց Կարիպ Ախպէր խանգաղատանքով մը, որուն մէջ իր բովանդակ անձ-

նութիւնները դրած էր :

—Աղօթագիրք մըն է, բարի հայր, պատասխանեց վարսենիկ ու չուտով մը ոտքի ելաւ :

—Ապրի՛ս, աղջի՛կս ... շատ կը սիրե՛ս կարդալ :

—Այո՛, շատ կը սիրեմ ... մայրս աղւոր գիրքեր ունէր, որոնք լուսահոգի հօրմէս մնացած էին . միշտ կուտար ինծի որ կարդայի :

—Աղէկ գիտե՛ս հօրդ մեռնիլը, ընդհատեց վանահայրն, որ լուռ կը կենար :

—Ինչպէս չէ՞ ... հիմակուան հայրս խորթ է ինծի . բայց շատ բարի մարդ մըն է :

—Մեռած չէ՞ ...

—Հապա՞ :

—Մահուան դատապարտուած ու կախուած է :

—Ո՞ր :

—Կ. Պօլիս :

Եւ որովհետեւ մինչեւ այն ատեն ո՛չ Կարիպ Ախպէր եւ ո՛չ ալ բարեւսիրտ վանահայրը հարցում մը ըրած չէին մանկամարդ աղջկան առեւանգումին վրայօք. — նկատելով որ անոր փափուկ

սենատու եւ երկու երեք տարին անգամ լանտդադ կոչւած պատգամաւորներն օրէնսդիր ժողով : Այդ ժողովի անդամները ժողովրդի չորս կարգերէն էին առանձին առանձին ընտրուած ազնուականներէն քաղաքացիներէն, հոգեւորականներէն ու գիւղացիներէն : Այս վերջին անգամն էլ կայսրի հրամանով քաղվել է այդ օրէնսդիր ժողովը Հէլ-սինգֆորսում : Բայց մի երկու օր առաջ սրանից՝ եւ այստեղի լանդտադի առջեւին գնալից զարմանալով տեսայ հազարաւոր մարդիկ ու կանայք կարմիր դրոշակներով, որոնք չըրպապտել էին այն ժողովի շինութիւնը, որի մէջ պատգամաւորները նիստ ունէին : Իմ ծանօթներէն հարցրի այդ արտաքոյ կարգի երեւոյթի պատճառը : Ինձ պատասխանեցին, թէ տե՛սէք, որ դըրանք ամենքն ալ իրանց հետ ուսուիք են բերել, ուրեմն այս շինութիւնը շրջապատած լինելով՝ չը պէտք է թոյլ տան պատգամաւորներին այդտեղից հեռանալ մինչեւ որ չընդունեն դրանց առաջարկութիւնը, որանք գիշեր եւ ցերեկ միշտ այդտեղ մնալու են այդ նպատակով : Եւ ինչ է դրանց պահանջը, հարցրի : Ինձ ասացին եւ այսօր էլ տեղական լրագրիւններ մէջ տպւած է, որ այդ շրջապատող հազարաւոր անձանց առաջնորդները, հրաւիրված լինելով այդ ազգային օրէնսդիր ժողովի նիստին, որոշ կերպով յայտնուծ են թէ երեք պահանջ ունեն. առաջինը որ այդ չորս կարգերը ընդվին եւ պատգամաւորները միմիայն մէկ խումբ կազմեն, երկրորդ՝ որ ժողովուրդը առանց մի որ եւ է բացատրութեան իրաւունք ունենայ պատգամաւոր ընտրելու, այսինքն, թէ մարդ թէ կին, որոնք պէտք է լինեն ոչ թէ միայն այժմեան պէս 24, այլ 21 տարեկան. երրորդ՝ որ պատգամաւոր ընտրող արական եւ իգական անձինքը նոյնպէս իրաւունք ունենան նստի, իրանք պատգամաւոր ընտրելու : Այդ երեք պահանջներն էլ ընդունեց օրէնսդիր ժողովը :

Հայն էլ լաւ կանէր, եթէ այսպիսի խելօք ու հանգիստ կերպով իր մէջն իր գործերը կայգի դնէր :

ԱԲՐ. ԱՄԻՐԻԱՆԵԱՆԾ.



—Ո՛չ, բարակ ու մետաքսայեւ ջուր մը նետած էին գլխուս վրայ, որ մինչեւ մէջքս կը հասնէր, Այդ քողին ծակտիքներէն ամեն բան կարող էի տեսնել : Երբ Մօլլան սեկնեցաւ, Զէքի պէյ ըսաւ ինձի. «Ապրի՛ս, Երեքրէ՛», ասկից ետքը Միւսթաֆան մը պէս պիտի սիրեմ քեզ : Ա՛յ դուն այս ապարանքին մէջ կհաժուրես աղջիկ մը չես : Կը մնայ նիքեհադ ... աստիկա պիտի կանաւորուի օր մը, երբ Երեքրէ պէյը աւարտէ զինուորական վարժարանին դասընթացքն ու վերադառնայ Կ. Պօլսէն մեր քովը : Հիմապու հիմա դուն Որդուոյ նշանածն ես » : Այս վերջին պարբերութիւնը գուցէ ու ժամգը կապած երկաթի կտորի մը պէս սրտիս խորը մխուցեալու կարծեցի թէ ապարանքը կը բլէր վրաս : «Ի՛նչ ըսի ինքնիւրենս, եւ այդ թի՛քն վիժածին ախտի նըրանս ի՛մ ... անկարելի՛ է. աւելի աղէկ է ջուրն մը նետեմ վիզս ու խըղձեմ զիս, քան թէ իմ արիւնս մտնող գազանի մը վիժածին կի՛նն ըլլամ » : Ու նոյն վայրկեանին ու խտեցի որ անձնասպան մը ըլլամ : Այս էր բոլոր մտածումս, ասորկապաւած էի մարմնովս ու

ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ԿԵԱՆՔԵՐ

ՏԻԵՂ ՍՈՎԵՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ուէսթ Փուլմընէն թղթակից մը հետեւեալը կը գրէ մեզի. Ամերիկայի հայ գործաւոր դասակարգին մէջ երեւցող տեղի սովորութեան մը վրայ՝

Սեւ երես ենք մարդով Իլլինոյսի մէջ, պատճառը լեզու չգիտնալիս չէ : Ստրուկ հայեր կան հոս որ 15 տարիէ ի վեր այս ազատ երկրին մէջ կը գտնուին, նորէն իրենց ստրկութիւնը չեն ձգեր անպատուելով իրենց հետ տեղիս բոլոր հայերը : Եթէ երկրէն նոր եկողներ ըլլային, պիտի ըսէի թէ չեն գիտեր : Սակայն ինչպէս ըսի 10-15 տարիէ ի վեր հոս են եւ նորէն իրենց դառն քրտինքով վատակածն բաժին մը կը հանեն իրենց պոսերուն, որ գիւրենք ալ տեղացիներուն պէս սիրէ : Մինչեւ իսկ այս ստրուկները 100 ներով տոլար կը հանգանակեն իրենց պոսերուն տալու համար, մինչդեռ հայրենիքին քանի մը սէնթ տալու կը դժկամակին : Մինչեւ ե՞րբ այս մարդիկը պիտի աղտոտեն մեր գոհարանունը : «Ինձիօն ները իրենց ժողովումներուն մէջ նիւթ ըրած են մեզ, եւ մեզ «վարնոց ազգ» կը կոչեն : Երանի՛ թէ ամերիկահայ մամուլը ուշադրութիւն դարձնէր այս խնդրոյն եւ ջանար այս աղտը սրբել հայ գործաւորներուն ճակատէն :

(Զայն Հայրենեաց)

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՒՆԻՆԵՐՈՒՆ

Սիրելի քոյրերս, Գրիշը ձեռքս կառնեմ գրելու ատենէն մը ի վեր սրտիս վրայ ծանրացող բեռն մը ճնշուած, գորալ կարող չեմ կրել : Սեռային նուաստութիւն մը կը գցամ մէջս, եւ չեմ կրնար նայիլ այդ մարդոց վրայ համարձակ կերպով ու խօսիլ անոնց հետ ճակատաբաց, վասնզի այս մի քանի տարուան մէջ հայ կիներ փոխանակ իգական սեռին պատիւը նսեմացնելու եւ վեր բարձրացնելու, փոխանակ հայ կեանքին ու անոր ազատագրութեան առաջնորդներն ըլլալու եւ հայ երիտասարդութեան երակներուն մէջ բացաւաբար շունչը փրչելու, փոխանակ Թրանսպի օրիօ դժան-Տարքի նման իրենց առաջին

հոգեւոյն : Ա՛խ, դիւրին էր տոյ ինձի համար : Ապարանքին պարտէզը չըջագայած ժամանակս ծառէն ջուրն մը պիտի կախէի ու վերջ պիտի տայի կեանքիս : Անցաւ շաբաթ մը . Զէքի պէյին որդին Կ. Պօլսի գնաց ու տաւրէն մը պիտի վերադառնար : Ամենեւի՛ն անոր երեսը չը նայեցայ ... պարգապէս կը պոգայի : Գրիշը մը, աւա՛ղ, բարի Աստուած երազիս մէջ հրեշտակ մը խրկեց ինձի ու պատուիրեց այսպէս . «Ետ կեցի՛ր մտադրութենէդ ... անձնասպանութիւնը գարշելի ոճիւր մըն է : Համբերութեամբ մը տա՛ր խաշը ... ճամբուդ վրայ ձեռքէդ բռնող պիտի գայ ... » : Ասիկա կրկնուեցաւ երեք անգամ : Լացի՛, շատ լացի՛ ... ու ձեռքս չգնաց ո՛նձս սպաննելու : Բայց ապրիլու հնարը չը կար : Որչա՛փ որ տաններկու տարուէի, սակայն վաղահաս վիշտը շատ բան զգացունեց ինձ ինձի : Արդէն կէս տարի անցած էր Մօլլայի արարողութեան ժամանակէն. եւ այդ միջոցներուն ուրիշ թուրք պառաւ ի մը յանձնուած էի ու անոր գետնայարկի մը վրայ շինուած տունին մէջ կը պահուէի : Անկից ետքն որ ա-

ոյժը, առողջ մտածութիւնը եւ կամքի կորովն նուիրելու ազգին, ելած են անանկ նուաստ եւ ազգակործան գեր մը կը խաղան, որ քնաւ ներքի չէ հայ քրիտոստենայ տիկնանց : Ի՛նչ կայ, ի՛նչ լսած էք, որ ձեր քունէն հաղիւ արթնցած՝ ձեր առաջին գործը կըլլայ ձեր էրկներէն հեռանալ եւ մէկ քանի օրէն աւտանալու ծովուն ալ կը կատարէք կը նստիք տեղերէնդ : Բուն իմ ճանչցածներս, որոնք այս կարգին կը վերաբերին 10-15 կտն, սակայն լընած եմ շատ շատերէն որ 100 ն ալ անցած է : Ասոնց մէջ կան որ հազիւ քանի մը շաբթուան մտուանցած են, կը սկսին ըմբոստանալ իրենց էրկներէն դէմ, չեն հաւնիր այդ քոսոտ ազգատ տղուն, ուրիշ մը աւելի գեղեցիկ կը տեսնեն եւ ուստի պէտք է ձգեն այդ անպիտան աղքատ տղանքը եւ երթան իրենց սիրածին ետեւէն, որ իրենց շատ կը յարմարի : Սիրելի քոյրս, դուն որ ատանկ քայլ մը կառնես, արդեօք ինքզինքդ կշիռք մէջ դրած ես, եւ կը խորհիս թէ իրաւ այն քեզմէ շատ վար կը մնայ եւ դո՛ւ շատ վեր :

Կան ոմանք որ քանի մը տարի կապրին իրենց էրկներուն հետ շատ աղուոր եւ յանկարծ կը լսես որ անոնք ալ զատուած են ու ամէն մէկը մէկ կողմ ելած : Ու այսպէս կերկարի այս շղթայն եւ կը հասնի մինչեւ անոնց, որոնք 10-15էն մինչեւ 24 տարիներէ ի վեր ապրած են շատ անուշ իրենց էրկներուն հետ, ունեցած են սիրուն զուակներ եւ հաս յանկարծ կը լսուի թէ այս ինչ կամ այն ինչ բարեկեցիկ ընտանիքը, որ լաւ դիրք ունէր քարուքանդ եղած է :

Ահա այսպէս ո՛վ ազգակործան քոյրերս, դուք որ քանի մը տարի առաջ երկրին մէջ իբրեւ համեստ ու քրիստոստենայ կը ճանչցուէիք եւ շատեր ձեր վրայ նայելով մեծ յոյսեր կը տածէին թէ ազգին կանգնող սիւնները պիտի ըլլաք, դուք հոս գալով կը փոխուիք, կը խորհիք թէ հոս ազատ երկիր է, ինչ որ ուղէք այն կրնաք ընել, ուստի ձեր առաջին գործը կըլլայ կացինն առնել եւ զարնել տանըհիմին եւ քարուքանդ ընել անոր բոլոր գեղեցկութիւնը : Այո՛, սիրելի քոյրս, հոս ա-

պարանք փոխադրուեցայ ... ասիկայ մոռցայ ըսելու, Սրբազան Հայր : —Հագ չէ՛, աղջի՛կ, յիշածներդ պտտմէ ... ետ տոա՛լ ըլլան մի՛ նայիր : Յետո՛յ :

—Տարի մը տնցաւ : Ապարանքին մէջ Երեքրէ հանրմ կը կոչէին զիս, ինչպէս ըսի, ու սպասուհիներէն սկսեալ ինչուան Թաթիմէ-հանրմ, ամենքը ալ կը գուրգուրային վրաս : Ա՛խ, Աստուած իմ, գիշեր՛ը մը ...

Ո՛չ, չը կրցաւ խոսքը շարունակել խեղճ աղջիկը ... արցունքը խղիցեց զինքը ու սկսաւ հեծկտալ : Վանահայրը սովորեցած կերպարանքով ա՛նոր երեսը նայեցաւ ու զողողալով ըսաւ . —Շարունակէ՛, աղջի՛կ, շարունակէ՛ ...

—Ա՛խ, Սրբազան հայր, ներեցէ՛ք, չեմ կրնար շարունակել, թոթովեց վարսնիկ :

—Կեանքիդ դէմ դաւադրութիւն մը սօրքուած էր : Վրայ բերաւ վանա հայրը :

—Այո՛ :

—Որե՛ւ ձեռքով :

—Նոյն Զէքի պէյին ձեռքով : —Ինչպէ՞ս : —Դնացած էի ... ան սենեակս եկաւ : —Յետո՛յ : —Անկողինս մտնել կուզեմ ... յանկարծ արթնցայ : —Ի՛նչ ըրաւ : —Պահանջեց որ անձնատուր ըլլայի իրեն : Բայց պոգանքով մը մերժեցի ու անկողնէս դուրս գատկելով սենեկին անկիւնը կեցայ : Ան ատեն կատաղած շունի մը պէս վրաս յարձակեցաւ ու սկսաւ լլկել զիս «Դիմադրեցի՛ ... անոր ձեռքերը խածա՛յ ու երեսները ճանկոտեցի՛ ... : Այս ընդդիմութեանէս սահմակած՝ չնձերը մէկ կողմ քաշուեցաւ ... ու ես այն ատեն տեսայ աւոր մատը ժուր անգին վատանին, որուն վրայ իմ հարազատ հօրս անունն ու մականունը քանդակուած էին :

(Շարունակելի)



զատ երկիր է եւ ուստի ազատ եւ շատ աւելի սիրել էրիկդ, զաւակներդ ու տունդ, ազատ եւ հոս մրցակցիդ Ամերիկացի ազնիւ դասակարգի կանանց հետ, ցուցնելով անոնց թէ դու ալ իբրեւ հայ կին կարող ես անոնց չափ ազնիւ, անոնց չափ համեստ եւ անոնց չափ լու տիպար կին մը ըլլալ քու էրկանդ ու տիպար մայր մը զաւակներուդ : Այո՛, կրնաս շափուիլ անոնց հետ լաւ եւ բարենպաստ ընկերութիւններու մէջ ոյժ տալովդ, կրնաս մրցակցիլ անոնց հետ ազգային տեսակէտով : Այսօր Սմերիկայի այսչափ յառաջացումը միայն կանանց կը պարտի, կիներն են որ իրենց էրկներն կը մղեն գործի, կիներն են որ կը պարտաւորեցնեն էրկներն, որ չի խնայեն զոհել իրենց կեանքերն իրենց միակ պաշտելի կարմիր ճերմակ կապոյտ դրօշին, այսպէս անոնց նման շատ մը բաներու մէջ կրնաք անոնց հետ մրցակցիլ :

Եթէ այսչափ բան ալ կարող չենք ընել, ուրեմն բնաւ արժանի չենք շղթայուելու այն ազնիւ եւ առաքելի հայ տիկնանց շարքին, որոնք հայ ազգին փառքն ու պարծանքն եղած են : Այո՛, երբ անոնց մօտեանանք՝ անոնք իրենց երեսները պիտի դարձնեն մեզմէ եւ թոյլ պիտի չտան մօտենալու իրենց :

Պէտք է վերջ մը տանք այս անտրդ գործին ու սրբենք հայութեան ճակատէն այս սեւ արատը եւ մեր ջանքերն չի խնայենք անաղարտ պահել հայ ազգին պատիւը :

Տիկ. ՀՐԱՆՈՅԾ Խ. ԱԻԱԿԵԱՆ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Թէեւ հսկայական չէնքեր չեն պակսիր նիւ-Եօքի մէջ, սակայն այս օրերս Հօթէլ Պելմօն անունով նորաչէն բացուած հիւրանոցը բաղադատար շատ ահագին է իր մեծութեամբը :

Այս հիւրանոցը ունի գետնէ վեր 21 յարկ, կը պարունակէ հազար հարիւր սենեակներ, եւ կրնայ պատուարել հազար վեց հարիւր ճանապարհորդներ :

Բացի վերոյիշեալ գետնէ վեր շինուած 21 յարկերէն, հիւրանոցը ու-

—Նոյն Զէքի պէյին ձեռքով : —Ինչպէ՞ս : —Դնացած էի ... ան սենեակս եկաւ : —Յետո՛յ : —Անկողինս մտնել կուզեմ ... յանկարծ արթնցայ : —Ի՛նչ ըրաւ : —Պահանջեց որ անձնատուր ըլլայի իրեն : Բայց պոգանքով մը մերժեցի ու անկողնէս դուրս գատկելով սենեկին անկիւնը կեցայ : Ան ատեն կատաղած շունի մը պէս վրաս յարձակեցաւ ու սկսաւ լլկել զիս «Դիմադրեցի՛ ... անոր ձեռքերը խածա՛յ ու երեսները ճանկոտեցի՛ ... : Այս ընդդիմութեանէս սահմակած՝ չնձերը մէկ կողմ քաշուեցաւ ... ու ես այն ատեն տեսայ աւոր մատը ժուր անգին վատանին, որուն վրայ իմ հարազատ հօրս անունն ու մականունը քանդակուած էին :

նր նաեւ 70 ոտք խորութեամբ գետնէն վար 5 յարկ, ուր կան 5 ճաշարանական ընդարձակ սրահներ, որոց մէջ հանգիստ կրնան ճաշել 1200 մարդ, կան նաեւ ընդարձակ խոհանոցներ, մէկ մեծ լուացարան, մէկ հացագործարան մը, շերմարաշխներ որոնք օրը 30 թնո հանքածուխ կտպանեն, սառույց չինելու գործիք մը որ օրը 10,000 քիլո սառույց կարտադրէ, օրական 45000 լիտր ջուր մատակարարող արդէսեան ջրօր մը եւ ընդգետնեայ երկաթուղւոյ կայարան մը :

Հիւրանոցին բարձրութիւնը 300 ոտք է, եւ վրան 150 ոտք բարձրութեամբ պողպատեայ կայմ մը անկուած է անթիւ հեռադրութեան համար :

Հիւրանոցի շինութեան եւ կահաւորութեան համար ծախսուած է 50 միլիոն ֆրանկ :

Իսկ գնոց գալով, առաջին յարկերուն մէջ՝ մէկ սենեկի օրական վարձը 100 էն մինչեւ 300 ֆրանկ է :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐ

Ազատ Բեւի մէջ կը կարգանք.

Մալթայէն քաղաքս հասած նամակէ մը կը տեղեկանանք թէ Ափր. Տրիպոլիտոյ աքսորականներէն, ի բաց առեալ Համբարձում Պոյաճեան (Մուրատ) Յակոբ Իսքէնտէրեան եւ Մովսէս ... եան եւ յաջողած են փախչիլ վերջին երկուքը ի մօտոյ կը հասնին Եգիպտոս, իսկ Մուրատ Բարիզ կը գտնուի այս պահուս, Հնչակեան այս վաղեմի գործիչներուն մէջ, Մուրատին հետ պէտք է մասնաւորապէս յիշատակել Յակոբ Իսքէնտէրեանը, որ քանի անգամներ թէն առիթ ունեցած էր աքսորավայրէն փախչելու, բայց չէր ուզած, սպասելով որ իր ընկերներն ալ գիւրութիւններ գտնեն եւ միասին փախչին, իսկ ականատես վկաններուն Եգիպտոս գալէն վերջ յայտնի պիտի ըլլայ թէ իրօք որոնք էին Մուրատի ազատման աշխատողները :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յայտնու ենք սրանով ի դիտութիւն վառնայի հայ հառարակութեան որ յատկապէս երկուշաբթի յունիս, 12 կսկսին քաղաքիս ազգ. երկս. վարժարանաց տարեկան հարգաքննութիւնները, որոնք հրապարակային են եւ որոնց կարող են, հետեւաբար ներկայ գտնուիլ ինչպէս աշակերտաց եւ աշակերտութեանց ծընողքները, նոյնպէս եւ բոլոր փառաքող ազգայինք :

Հարգաքննութիւնները կը կատարուին ճեպարկի տնօրէն Կողմից նախապէս պատրաստուած ժամանակացուցի համեմատ եւ կը տեւեն մինչեւ ամսոյս 24 ր :

Քննութիւնները սովորաբար կսկսին առաւօտեան ժամը 9 ին եւ կը տեւեն մինչեւ ժամը 12. Իսկ կէս օրէն յետոյ կսկսին ժամը 2 ին եւ կը տեւեն մինչեւ 4, բացի կիրակի օրէն,

յունիս 18, որ օրը կէս օրէն յետոյ քննութիւններ չեն լինիր :

Հոգաբարձութիւն Ազգ. Երկ. Վարժ. Զ յունիս 1906
Վառնա

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐԵՐ

Վիէննա, 15 Յունիս

Ալպանիոյ փաստելոց համար եղած հանգանակութիւնը գոյացուց 101,912 քուրօն, սը Շքօտրայի Աւստրո-Հունգարական ընդհանուր Հիւպատոսին խրկուեցաւ :

Կ. Պօլիս, 17 Յունիս

Յամաքային եւ ծովային շատ մը սպաներ պահանջեցին գանձային եւ ծովային նախարարութիւններէն որ իրենց յետաձգեց ամսականները հատուցվին :

Կ. Պօլիս, 16 Յունիս

Բաւական թուով հայեր սահմանադրութիւն անցնելով Բիւրտեքու հետ արիւնահեղ բաղխում տեղի ունեցաւ :

Ձէյթունի մէջ մեծ անհանգըստութիւն կը տիրէ յետաձգեց տուրքերը խստիւ պահանջուելուն համար :

Բեթերսպուրկ, 16 Յունիս

Պիէլօթօկէն եկած մասնաւոր հեռագիրները կըսեն որ շարքերը կառավարութեան կողմէ պատրաստուած են եւ Հրեայները ամենեւին պատասխանատու չեն անոնց :

Ազատական լրագիրները այս մասին շատ խիստ յօգուածներ հրատարակեցին : «Նաչա ժիզն» լրագիրը որ մինչեւ հիմայ չափաւոր լեզու կը գործածէր, Տումային խրատ կուտայ որ կառավարութեան գէթ պատերազմ հրատարակէ :

Կառավարութիւնը նախագուշակելով հողային խռովութիւններու մօտաւոր ծագում, Բօլթավայի Խարքովի եւ Բուքարէ քաղաքաց զօրքը կը կրկնապատկէ :

Բեթերսպուրկ, 16 Յունիս

Քաղաքիս մէջ նոր ընդհանուր գործադուլի պատրաստութեան ձայներու հանդէպ, քաղաքային իշխանութիւնը գործաւորական թաղերու մէջ պահպանութիւն ընող զօրաց թիւը կը բազմապատկեն, կայարաններու մէջ խիստ հսկողութիւն կընեն, եւ կարգի են միթիւններու սարքումը :

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Բերայի ոստիկանութիւնը կազմակերպելու համար ասկէց 12 տարի առաջ Ապտիւլ Համիտ Բարիզի ոստիկանական պաշտօնէտ-

ներէն Լըֆուլլուն անունով մէկը բերել տուած էր, որ ան առնէն ի վեր Բերայի Ղալաթիս ե Պէշիկթաշի ոստիկանական լրտեսութիւնը կազմակերպելու առանձին Սուլթանի անձին վրայ կը հսկէր :

Այս ֆրանսացի ստորին պաշտօնեան սը Համիտի ծառայութեան մտնելով փաշայութեան տիտղոս եւ մեծ հարստութիւն ունեցաւ, այժմ հանգստեան թոշակ առնելով Բարիզ վերադարձած է, իր տեղը իր որդին հաստատուած է այժմ ի Պօլիս իբր առաջին լրտեսապետ Սուլթանի :

— Կ. Պօլսէն հաղորդուած հեռագրի մը համաձայն Անգղիոյ զեապանը պահանջած է որ Սուլթանը անմիջապէս յետ կանչէ Մուլթար փաշան :

— Մաքսային տրոց վրայ հարիւրին 3 յաւելման խնդիրը նոր դժուարութեան բաղխեցաւ : Սուլթանը չուզեր որ ինչպէս զեապանը պայման դրած էին, ընդհանուր պարտուց վարչութիւնը հարիւրին 25 առնէ աւելցած գումարէն :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խան լրագրի Սօփիայէն առած մի հեռագրի մէջ կը կարգանք.

«Յունաստան Պուլկարիոյ աւանդական թշնամին է, բնական է ուրեմն որ Պուլկարիա համակիր ըլլայ Ռուսմանիոյ, որ այս միջոցիս Բուցօ-վալաքներուն եկեղեցական անկախութեանը համար Յունաց պատրիարքարանի հետ կուրի բռնուած է, կուր մը որոյ նմանը երեսուն տարի տուալ Պուլկարիան եւ ունենալով յաղ-

թութեամբ վերջացուցած էր : ...

Յոյն-Ռուսական վեճը արդէն հետեւանք մը ունեցաւ : Պուլկարիա ժողովրդային կամաց ճնշման ներքեւ ստիպուեցաւ Մակեդոնիոյ մէջ յոյն հրոսախուժեալ գործած չարեաց վերէժը գէթ մինչեւ մի աստիճան առնել : Այսպէս երէկ մերժուեցաւ Վառնա մտնելը նոր յոյն պիսկոպոս Նէօֆիլօսին որ յունաց պատրիարքարանը՝ առանց պուլկարական կառավարութեան հաւանութիւնը ուզելու եւ առնելու Վառնայի եպիսկոպոս անուանելով զրկած էր : Ասի ահա Վառնայի ժողովուրդին լաւ առիթ մը եղաւ մեծ գումարման մը մէջ յունաց դէմ վրէժառութեան մը միջոցը որոշելու եւ գործադրելու :

— Այս առաւօտ՝ քաղաքիս Պալլէք Բաղար փողոցին մէջ եղած երգեցիկ սրճարանէն հրդէհ ծագելով ամբողջ շէնքը այրուեցաւ առանց փրկու տալու յարակից շէնքերուն :

Մ Շ Ա Կ

Օրաթերթ քաղաքական, գրական

Բաժնեգիր՝ Երոպայի համար 30 ֆր. Ամերիկայի համար 6 տոլար, Պարսկաստանի եւ Ռուսաստանի համար 10 ռուպլի տարեկան :

Հասցէ՝ Խմբագրութիւն «ՄՇԱԿ» (Կովկաս) Թիֆլիս

Одговорникъ А. Курбетянъ
редакцията Д. Тодоровъ С.-не—Врѣна

ՅԵԿՈՒ ԹՕՈՊԸՅԸԳԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՎԱՌՆԱ

Բարիգոյ, Ժընէվի եւ Պոռլքսէյի ցուցահանդէսներուն մէջ մի ծագոյն պարզեւներ ստացող ու համաշխարային գնահատման բարձրագոյն արժանացող այս ժամացուցի գործարանը «ՕՄԵԿԱ» իրօք իր անունը արգարացուցած է իբր ճարտարութեամբ կատարելագործութեանց վերջին աստիճանին ՕՄԵԿԱ ին հասցնող հաստատութիւն մը :

Այս հոշակաւոր Գործարանին ներկայացուցիչն է Տ. Եակոբ Թօսպրլըգեանի վաճառատունը, ուր կը գտնուին «ՕՄԵԿԱ» ժամացուցներու բոլոր տեսակները, ոսկեայ, արծաթեայ եւ պողպատեայ ամեն չափէ ու մեծութենէ. Գրիներ, ԶԱՓԱՒՈՐ :

Կր գտնուի նաեւ Պուլկարիոյ բոլոր կարեւոր ակնաւաճառներու եւ ժամագործներու քով :